

Ժամուս¹ տեղի տալ եւ անձին զգուշանալ: 13 Եւ զաւրավարին Յայոց Վահանայ Մամիկոնէի տեառնագրեալ զինքն՝ բարձր ձայնիւ ասէր, թէ «Յիս² արդոք յուշ մի՛ ասեք. զի ինձ յուսալ ի մարդ եւ կամ պարծել մարդով՝ քա՛ն լիցի, բայց միայն ի խաչն տեառն մերոյ Յիսուսի Զրիստոսի»:

14 Եւ քաջաբար ի մէջ ամենայն զաւրացն Պարսից յարձակէր հանդերձ լաւ ուխտապահ արամբքն սակաւութեամբ, որ մնային առ նմա: 15 Եւ ապշեալ ընդ ահաւոր աներկիւղ³ ուժին զաւրավարին Յայոց Վահանայ եւ ընդ այլ սակաւ այնքան արանցն որ ընդ նմա, զաւրագլխին⁴ Պարսից Շապիոյ՝ ճեպով ցիշխանն Սիւնեաց առ Գդիհոն յղէր, ասէ. «Ձե՛ռն տուր յիս կողմն, վասն զի իրս անպատումն իմն եւ⁵ նորոգս ցուցաւ. զի թէ արդարեւ զաւրութիւն իմն աներեւոյթ այլ է, որ աւգնէ նոցա եւ մեզ չերեւի՝ զայն ես ոչ գիտեմ. բայց եթէ անմտութեամբ ցանկան անձնամահք⁶ լինել՝ ապա ի մէջ արարեալ զամենեսեան զնոսա այսաւր ձերբակալս առնեմք»: 16 Եւ իշխանն Սիւնեաց Գդիհոնն խնդալից եղեալ ընդ կոչն Շապիոյ՝ նշկահելով փութանակի ի տեղին արշաւէր: 17 Եւ զաւրավարն Յայոց Վահան Մամիկոնեան, հանդերձ ընդ իւր միասիրտ սակաւ արամբք, աւգնութեամբ աջոյ հզաւրին յարձակեալ՝ հերձանէր զբովանդակ գունդն Պարսից, որպէս յորդահոսանք բազմութիւնք⁷ ջրոց, որ հեղեղատեն⁸ զերկիր եւ անցանեն: 18 Եւ ինքն հզաւրաբար քաջ ուխտակցաւքն նման առիւծու⁹ ընդ մէջ ամենեցուն յայնկոյս ելանէր. եւ սպանեալ իւր եւ արանցն որ ընդ նմա բազում արս հզաւրս պատերազմողս ի զաւրացն Պարսից՝ հարեալ խոցէին նիզակաւ ընդ անութ կարեւեր եւ զհպարտ իշխանն Սիւնեաց Գդիհոն, եւ զահաւորալուր ամրութիւնն զինուն, յոր պանծացեալ յուսայր անաւրէնն՝ ցելեալ վեր ի վայր թափ ընդ լեարդն զնիզակատեգն հասուցանէին: 19 Որոյ դառնակոռոչ¹⁰ չարալլուկ հեծմամբ յաւուրս սակաւս վճարեալ¹¹ զոգին՝ սատակէր անխոստովան. որ պարծերն ամբարտաւանութեամբ¹² եւ ասէր, թէ «Ես ընդ Վահանայ եւ ընդ այլ Յայերդ¹³ ոչ եթէ նետիւ կռուիմ, այլ գոզըկով պուղեալ¹ զբոլորս ցնդեմ,

1 Ատ. ի ժամոյս

2 ԲԳտ. յիս

3 ՏՏ. աներկիւղած. Զ. նախ՝ աներկիւղած, ապա՝ ած-ը բերուած

4 ԶՏՏ. որ ընդ նմա, զիստ զորագլխին

5 ՏՏ. չիք եւ

6 Գտ. անձնամահ

7 Ատ. բազմութիւն. ԲԳտ. բազմութեան. այսպէս ըստ Զ. - թուի յորդահոսան բազմութիւնք

8 Զ. նախ՝ հեղեղատիցեն, ապա՝ ից-ը բերուած

9 ՏՏ. առիւծոյ

10 Ատ. դառնակոռոչ

11 Զ. վճարեալ-ի ճ-ն վերելից աւելացրած

12 ՏՏ. անբարտաւանութեամբ

13 ՏՏ. եւ այլ հայերդ